ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» «----------» 2024թ. **N --- - Ա**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 81-րդ հոդվածի 2-րդ, 82-րդ հոդվածի 4-րդ մասով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ անկախ աուդիտ անցկացնելու նպատակով ներգրավել աուդիտորական ծառայություն:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված նպատակով ձեռք բերվող աուդիտորական ծառայության տեխնիկական բնութագիրը՝ համաձայն հավելվածի:

3. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ համաձայն «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսելը, «Գնումների մասին» օրենքի 20-րդ հոդվածով սահմանված բաց մրցույթի կիրառմամբ գնում կատարելու ձևով, կազմակերպել աուդիտորական ծառայությունների ձեռք բերման գործընթացը՝ սույն որոշման 2-րդ կետով հաստատված տեխնիկական բնութագրին համապատասխան:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Տ. ԱՎԻՆՅԱՆ

2024 թ. _____ « »
Երևան

Հավելված
Երևանի ավագանու
2024 թվականի ---------- ----
N ––––Ա որոշման

Տ Ե Խ Ն Ի Կ Ա Կ Ա Ն Բ Ն Ո Ւ Թ Ա Գ Ի Ր

Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունների հաշվեքննության (աուդիտի) ծառայությունների

Պետք է իրականացվեն Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունների աուդիտորական ծառայություններ: Աուդիտորական ծառայությունների ավարտման վերջնաժամկետ է սահմանվում Պայմանագիրը (համաձայնագիրը) ուժի մեջ մտնելուց հետո 21-րդ օրացույցային օրը ներառյալ: Աուդիտը պետք է իրականացվի ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

ա) Աուդիտ անցկացնելու ընթացքում անհրաժեշտ է իրականացնել՝

1) աուդիտի ենթարկվող օբյեկտի կողմից իրականացվող գործառույթների՝ օրենսդրության պահանջներին համապատասխանության գնահատում,

2) աուդիտի ենթարկվող օբյեկտի կողմից ծախսերի տնտեսման ուղղությամբ իրականացվող աշխատանքների և տնտեսական հնարավորությունների օգտագործման գնահատում,

3) աուդիտի ենթարկվող օբյեկտի բնականոն աշխատանքը խանգարող արհեստական խոչընդոտների ու օրենսդրությանը չհամապատասխանող գործողությունների բացահայտում:

Աուդիտորական հաշվետվությունում ներկայացված տեղեկատվությունը պետք է լինի հստակ, համառոտ և ամբողջական՝ բացառելով որևէ փաստացի անճշտություն: Աուդիտորական հաշվետվությունում ներառվում են նաև աուդիտորական ապացույցների քանակական հաշվարկներն ու գնահատականները, ինչպես նաև հղումներ օրենսդրության պահանջներին:

բ) Աուդիտորական կազմակերպությունը պետք է ունենա առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ աուդիտի ոլորտում, ունենան առնվազն 7 աշխատակից, ովքեր ունեն առնվազն 5 տարվա աուդիտորական աշխատանքային փորձ և որոնցից առնվազն 2-ը ունեն միջազգային որևէ որակավորում:

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 81-րդ հոդվածի 2-րդ կետի Երևան քաղաքի բյուջեի կատարման վերահսկողությունն արդյունավետ իրականացնելու նպատակով ավագանին պարտավոր է սահմանված կարգով ներգրավել աուդիտորական ծառայություններ, որի աշխատանքային ռեսուրսները պետք է համապատասխանեն Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի հ. 1-Ն որոշման 83.1 կետին:

Հաշվի առնելով, որ Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը ավագանուն պետք է ներկայացվի մինչև 2025 թվականի մարտի 1-ը, իսկ ծառայությունը պետք է մատուցվի 2025 թվականին և վճարումն իրականացվի Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեից՝ համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսելու դեպքում, ուստի աուդիտորական ծառայություններ ներգրավելու նպատակով ներկայացվում է Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Տ. ԱՎԻՆՅԱՆ